Կազմված է՝ 25.05.2012թ. 29 թերթից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3
ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 29.07.1996Թ.

գրանցման թիվ 83.120.00035
վկայական 01Ա003136
հարկ վճարողի հաշվառման համար
04401874

27.02.2004թ. գրանցված կանոնադրության
թիվ 010.2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից
23.07.2012թ.

Տ/Բ պետ՝

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"ՀԱԷԿ" ՓԲԸ բաժնետիրոջ արտահերթ
ընդհանուր ժողովի "29" մայիսի 2012թ
թիվ 1/12 որոշմամբ

Ա.Խ. Մովսիսյան
ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարար
"30" մայիս 2012թ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2012

1. Ընդհանուր դրույթներ

1.1 «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ Կառավարության 1994թ. հոկտեմբերի 14-ի «ՀՀ էներգետիկայի և վառելիքի նախարարության «Հայկական ատոմային էլեկտրակայան» հատուկ նշանակության պետական ձեռնարկությունը փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորելու մասին» թիվ 492 որոշման հիման վրա և հետագայում ՀՀ կառավարության 19.03.99թ. թիվ 169 որոշմամբ վերագրանցվել «Հայկական Ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերության:

ՀՀ կառավարության 04.04.1996թ. N98 որոշմամբ նշանակվել է /ճանաչվել է/ Հայկական ատոմային էլկտրակայանը որպես ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտը Շահագործող կազմակերպություն՝ "Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին" ՀՀ օրենքի իմաստով: ՀՀ կառավարության 17.09.2003թ. N1211-Ա որոշմանը համապատասխան, ՀՀ և Միջազգային էլէկտրական կապերի զարգացման "ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ" ՓԲԸ միջև 18.09.2003թ. կնքված պայմանագրի հիման վրա, Ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնվել են Հավատարմագրային կառավարման: Համաձայն ՀՀ կառավարության 01.03.2012թ. N 227-Ն որոշմանը՝ 29.03.2012թ. հավատարմագրային կառավարման պայմանագիրը վաղաժամկետ լուծվել է: Ընկերության ՀՀ սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերի կառավարումն իրականացվում է ՀՀ կառավարության 06.11.2003թ. N1694-Ն որոշման 1-ին,2-րդ կետերի համաձայն: ՀՀ նախագահի 2008թ. ապրիլի 18-ի թիվ ՆՀ-80-Ն հրամանագրով ՀՀ էներգետիկայի նախարարությունը վերանվանվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության: Ընկերությունը առևտրային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետիրական պարտավորական իրավունքը հավաստող որոշակի թվով բաժնետոմսերի:

1.2 Ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է:

1.3 Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցում) պահից:

1.4 Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով /այսուհետև՝ օրենսգիրք/, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով /այսուհետև՝ օրենք/, «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով,

Ընկերությանը տրված գործունեության լիցենզիայով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5 Բաժնետիրոջ և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են օրենսգրքով, օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.6 Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ բաժնետիրոջ պարտավորությունների համար:

Ընկերության բաժնետերն Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չի կրում, այլ իրեն պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում է Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.7 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.8 Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իր ֆիրմային անվանմամբ ՀՀ զինանշանի պատկերով կլոր կնիք /հայերեն, ռուսերեն, անգլերեն գրառումներով/, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

1.9 Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝	«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ	«ՀԱԷԿ» ՓԲԸ
ռուսերեն լրիվ	Закрытое акционерное общество “Айкакан атомайин электракаян”
կրճատ՝	ЗАО “ААЭК”
անգլերեն լրիվ	“Haykakan atomayin electrakayan” Closed Joint-Stock Company
կրճատ	“HAEK” CJSC

1.10 Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական /փոստային/ հասցեն է՝ ՀՀ, 0911, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր:

2. Ընկերության գործունեության առարկան և նպատակը.

2.1. Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեության իրականացմամբ շահույթի ստացումը.

2.2. Ընկերության գործունեության տեսակներն են՝

2.2.1. ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգ և արդյունավետ շահագործումը՝ էլեկտրական էներգիայի /հզորության/ արտադրության համար:

2.2.2. էլեկտրաէներգիայի /հզորության/ արտադրություն:

2.2.3. Ընկերությանը պատկանող արտադրած էլեկտրաէներգիայի /հզորության/ արտահանում:

2.3. Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի /հատուկ թույլատվություն/ առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ դրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի պայմաններով նախատեսված է, որ Ընկերությունը, բացի լիցենզավորվող գործունեությունից, չի կարող զբաղվել այլ գործունեությամբ, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության այլ տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվելու այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով չարգելված գործունեության:

3. Ընկերության իրավական վիճակը, իրավունքներն ու պարտականությունները

3.1. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:

Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք եվ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային եվ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.2. Ընկերությունը իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց առաջարկել այլ կերպ ձեռք բերելու դրանք:

3.3. Ընկերությունը կարող է լինել այլ Ընկերության /այդ թվում՝ դուստր, կախյալ/ ու ընկերակցության հիմնադիր /մասնակից/, բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կատարվում է դրանց գտնվելու վայրի, երկրի օրենքների և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

3.4. Ընկերությունը սույն կանոնադրության դրույթների, Օրենսգրքի , Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ /մասնաճյուղեր և ներկայացուցչություններ/, ինչպես ՀՀ, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկներ:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության կողմից հաստատած կանոնադրության հիման վրա, իսկ նրանց ղեկավարները նշանակվում են Ընկերության կողմից և գործում են վերջինիս տված լիազորագրի հիման վրա:

3.5. Ընկերությունն իրավունք ունի.

3.5.1. ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացած եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

3.5.2. Օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ ՀՀ և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես ՀՀ արժույթով այնպես էլ արտարժույթով,

3.5.3. ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, ՀՀ և այլ պետություններում ստանալ բանկային և այլ առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,

3.5.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր,

3.5.5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,

3.5.6. ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը /էներգետիկայի մասին՞ ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալը և գները որոշվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից/,

3.5.7. օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.6. Ընկերությունը պարտավոր է՝

3.6.1. ՀՀ օրենսդրությամբ եվ այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական եվ վիճակագրական հաշվետվություն,

3.6.2. աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,

3.6.3. օրենքով սահմանված կարգով և դեպքերում հայտարարել իր սնանկության մասին,

3.6.4. ապահովել ընկերության փաստաթղթերի /ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի/ պահպանումը,

3.6.5. կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. Ընկերության գույքը

4.1. Ընկերության գույքը կազմում են՝

4.1.1. բաժնետիրոջ դրամական և այլ գույքային ներդրումները,

4.1.2. բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ու վարկատուների կողմից տրված վարկերը,

4.1.3.Օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներից ստացված միջոցները:

5. Ընկերության կանոնադրական կապիտալը

5.1. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը և կազմված է Բաժնետիրոջ ձեռք բերված բաժնետոմսերի անվանական արժեքից:

5.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է՝ 9 247 849 000 /ինը միլիարդ երկուհարյուր քառասունյոթ միլիոն ութհարյուր քառասունինը հազար/ դրամ, որը կազմում է 4000 /չորս հազար/ հատ հասարակ /սովորական/, անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 2 311 962, 25 /երկու միլիոն երեքհարյուր տասնմեկ հազար իննհարյուր վաթսուներկու, 25 լումա/ դրամ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորած անձի՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից:

5.3. Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15%-չափով: Պահուստային հիմնադրամը ծախսվում է Ընկերության գործունեությունից առաջացած կորուստները ծածկելու համար:

5.4.Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել Բաժնետերերի ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ) որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և իրավաբանական անձանց պետական ռեգիստրում Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցման պահից:

5.4.1. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը:

Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված և վճարված են:

Ընկերությունն իր ամենամյա գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման ճանապարհով ավելացնել կանոնադրական կապիտալը.

- շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ
- Ընկերության զուտ ակտիվների, (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական կապիտալ:

Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով ընկերությունը չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

5.4.2. Կանոնադրական կապիտալի նվազեցումը:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ կամ բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում՝ Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

Ընկերությունը իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը կդառնա ավելի փոքր Օրենքով սահմանված նվազագույն չափից:

5.5. Ընկերության կանոնադրական կապիտալը թույլատրվում է նվազեցնել Օրենքով սահմանված կարգով բոլոր պարտատերերին տեղեկացնելուց հետո: Այդ դեպքում Ընկերության պարտատերերը իրավունք ունեն պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, վաղաժամկետ կատարում կամ դադարեցում, ինչպես նաև վնասների հատուցում:

5.6. Ընկերության զուտ ակտիվների արժեքն Ընկերության կանոնադրական կապիտալի չափից նվազելու հիմքով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կատարվում է բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքի համամասնորեն պակասեցմամբ՝ առանց բաժնետերերին որևէ հատուցման:

6. Բաժնետոմսեր և այլ արժեթղթեր

6.1. Ընկերությունը կարող է տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր, Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:

6.2. Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հասարակ /սովորական/ բաժնետոմսեր:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը անվանական են:

6.3. Ընկերության Ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ) որոշմամբ Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային /տպագրական եղանակով պատրաստած/ կամ ոչ փաստաթղթային (էլեկտրոնային) ձևի անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր: Ընդ որում բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:

6.4. Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի արժեքը վճարելուց և Ընկերության պետական գրանցումից հետո Ընկերությունը Բաժնետիրոջ բաժնետոմսերը պետք է գրանցի Օրենքով սահմանված կարգով:

Բաժնետոմսերի հավաստագիրը /սերտիֆիկատը/ անվանական արժեթուղթ է, որը հավաստում է նրա սեփականատիրոջ կողմից տվյալ Ընկերության որոշակի տեսակի և քանակի բաժնետոմսերի սեփականության իրավունքը:

Հասարակ /սովորական/ բաժնետոմսերի համար Բաժնետիրոջը տրվում են հավաստագրեր: Հավաստագրերը տրվում են լրիվ վճարված բաժնետոմսերի համար:

Հավաստագիրը տալու, այն փոխարինելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանվում է Օրենքով և այլ իրավական ակտերով:

Հավաստագիրը պետք է համապատասխանի ՀՀ իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

6.5. Բաժնետոմսը անբաժանելի է:

6.6. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռք բերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

Ընկերության բաժնետոմսերի եվ այլ արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխումը կատարվում է Ընկերության խորհրդի որոշմամբ, Օրենքով սահմանված կարգով և ենթակա է անկախ փորձագիտական վերստուգման /աուդիտի/:

6.7. Ընկերությունն իրավունք ունի պարտատոմսեր թողարկել կանոնադրական կապիտալի չափը չգերազանցող գումարով:

7. Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը

7.1. Ընկերությունն իրավունք ունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից /կուտակված շահույթից/:

Շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ խորհրդի ներկայացմամբ՝ հիմնադրի կողմից սահմանված կարգով:

Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից :

7.2. Ընկերությունն իրավունք չունի հայտարարել տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը.
- շահութաբաժիններ վճարելու որոշման ընդունման պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկություն) հայտանիշներին, կամ նշված հայտանիշները ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
- Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով.
- Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ Օրենքի հդ. 58-ի դրույթներին համապատասխան:

8. Հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունը

8.1. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն:

Ընկերության գլխավոր տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններ ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության

բաժնետերերին (Բաժնետիրոջը), պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

8.2. Տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգող հանձնաժողովի եզրակացությամբ: Նշված փաստաթղթերը հրապարակելուց առաջ պետք է ստուգվեն և դրանց հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության և Ընկերության Բաժնետիրոջ հետ ընդհանուր գույքային շահեր չունեցող աուդիտն իրականացնող անձի կողմից:

8.3. Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է խորհրդի կողմից նախնական հաստատման՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ:

9. Բաժնետիրոջ իրավունքներն ու պարտականությունները

9.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ /սովորական/ բաժնետոմսն իր սեփականատեր հանդիսացող Բաժնետիրոջը տալիս է միևնույն իրավունքները:

Հասարակ /սովորական/ Բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող Բաժնետերը՝ Օրենքի և Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

9.1.1. մասնակցել Ընկերության Ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

9.1.2. մասնակցել Ընկերության կառավարմանը,

9.1.3. ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,

9.1.4. առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենքով այլ բան չի նախատեսվում,

9.1.5. ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,

9.1.6. հանդես գալ առաջարկություններով Ընդհանուր ժողովում,

9.1.7. Ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,

9.1.8. Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,

9.1.9. Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում, անվճար ստանալ համապատասխան քանակությամբ հասարակ /սովորական/ բաժնետոմսեր,

9.1.10. օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

9.2. Ընկերության բաժնետերը իրավունք ունի իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը օտարելու՝ մասնավորեցումը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

9.3. Ընկերության բաժնետոմսերի գրավի և հետագայում գրավառուի կողմից դրանց վրա բռնագանձում տարածելու դեպքում կիրառվում են սույն կանոնադրության 9.2. կետի կանոնները:

9.4. Հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատիրոջը չի կարող տրամադրվել նրան պատկանող հասարակ /սովորական/ բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք: Հասարակ /սովորական/ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

9.5. Բաժնետերը պարտավոր է չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ:

10.Ընկերության կառավարման մարմինները

Ընկերության կառավարման մարմիններն են՝

10.1. Բաժնետիրոջ ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով).

10.2. Խորհուրդը.

10.3. Ընկերության միանձնյա գործադիր մարմինը (Գլխավոր տնօրենը)

11.Ընդհանուր ժողով

11.1. Ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել Բաժնետիրոջ տարեկան Ժողով:

Տարեկան Ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև բաժնետերերին (Բաժնետիրոջը) ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին (Բաժնետիրոջը) տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է խորհուրդը՝ օրենքով սահմանված կարգով:

11.2. Ժողովի իրավասությունները

11.2.1. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ը)բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռքբերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Գլխավոր տնօրենի նշանակումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

ժգ) սույն Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող ընկերության այլ արժեթղթերի ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը:

ժդ) ժողովի վարման կարգը.

ժե) Ընկերության կողմից բաժնետիրոջը և նրա կողմից լիազորված անձանց տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժզ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

ժէ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.

ժը) ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում. .

ժթ) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի, խորհրդի անդամների, գլխավոր տնօրենի), ինչպես նաև Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների աշխատանքի վարձատրության և կամ ծախսերի փոխհատուցման չափերի, պայմանների որոշումը.

ի) Օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

11.2.2. Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք օրենքով չեն սահմանվել որպես նրա իրավասություն:

11.3. Ժողովի որոշումները

11.3.1. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում է Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը:

11.3.2. Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի (լիազորված մարմինների) ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ և օրենքով սահմանված դեպքերի:

11.3.3. Կանոնադրության 11.2.1 կետի «բ», «ժգ», «ժե», «ժզ», «ժէ», «ժը» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ միայն խորհրդի ներկայացմամբ:

11.3.4. Կանոնադրության 11.2.1 կետի «ա», «բ», «դ» «զ» և «ժէ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը (Բաժնետերը):

11.3.5. Կանոնադրության 11.2.1. կետի «բ», «գ», «ը» ենթակետերում սահմանված հարցերով պետությանը պատկանող բաժնետոմսերով ընկերության ընդհանուր ժողովում լիազորված պետական մարմինը կամ լիազորված անձը մասնակցում են

որոշումների ընդունմանը միայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման առկայության դեպքում:

11.3.6. Ժողովի վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է Ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:

11.3.7. Ժողովն իրավունք չունի փոփոխել Ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

11.3.8. Ժողովի որոշումները կարող են ընդունվել Բաժնետիրոջ կամ նրա կողմից լիազորված մարմնի (անձի) գրավոր որոշմամբ:

11.4. Ժողովին մասնակցելու իրավունքը

11.4.1. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը կամ նրա կողմից լիազորված անձը.

բ) Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի անդամները, ընկերության գլխավոր տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

գ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները.

դ) Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ժողովի նյութերում):

11.5. Ժողովի գումարման մասին ծանուցումը

11.5.1. Լիազորված անձինք Խորհրդի կողմից ծանուցվում են Ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

Ժողովի գումարման մասին ծանուցման ձևը սահմանվում է Ժողովի որոշմամբ:

11.5.2. Ժողովի գումարման մասին բաժնետիրոջը (լիազորված անձանց) ծանուցելու ժամկետը սահմանվում է Ժողովի գումարման օրվանից առնվազն 3 օր առաջ:

11.5.3. Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը.

բ) Ժողովի գումարման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

գ) Ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.

դ) քննարկվող հարցերի վերաբերյալ տեղեկատվական նյութերի ցանկը:

11.5.4. Տարեկան Ժողովը նախապատրաստելու ընթացքում Բաժնետիրոջը /լիազորված անձանց/ ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը ներառում են՝

ա) Ընկերության տարեկան հաշվետվությունը.

բ) Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Ընկերության վերստուգող հանձնաժողովի և Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը.

գ) տեղեկություններ խորհրդի, վերստուգող հանձնաժողովի առաջադրվող թեկնածուների մասին (ընտրության կամ վերընտրության հարցի քննարկման դեպքում).

դ) կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ կանոնադրության նախագիծը նոր խմբագրությամբ:

Օրենքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել Ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետիրոջը ներկայացվելիք այլ տեղեկությունների լրացուցիչ ցանկ:

11.6. Ժողովի նախապատրաստումը

11.6.1. Ժողովի նախապատրաստման ընթացքում խորհուրդը որոշում է՝

ա) Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) Ժողովի օրակարգը.

գ) Ժողովի գումարման մասին բաժնետիրոջը ծանուցելու կարգը.

դ) Ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը:

11.7. Արտահերթ Ժողովը

11.7.1. Արտահերթ Ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ լիազորված անձանցից յուրաքանչյուրի պահանջով:

Արտահերթ Ժողով գումարելու պահանջը պետք է ստորագրված լինի Ժողովը գումարելու պահանջ ներակայացրած անձի (անձանց) կողմից:

Արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում խորհուրդը պետք է արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում:

11.7.2. Արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկել ժողովի օրակարգում և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը:

Խորհուրդն իրավունք չունի փոփոխություններ մտցնել արտահերթ ժողովի առաջարկվող օրակարգում, ինչպես նաև փոփոխել օրակարգի քննարկման ենթակա հարցերի առաջարկվող ձևակերպումները, բացառությամբ այն դեպքի, երբ առաջարկվող օրակարգի հարցերը կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ժողովի իրավասության առարկա:

11.7.3. Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը պետք է ընդունվի պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրվա ընթացքում:

Խորհուրդն արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին որոշում կարող է ընդունել միայն այն դեպքում, եթե՝

ա) խախտվել է արտահերթ ժողովի գումարման պահանջը ներկայացնելու կարգը.

բ) արտահերթ ժողովի օրակարգի հարցերից ոչ մեկը չի վերաբերում կանոնադրությամբ սահմանված ժողովի իրավասությանը.

գ) ժողովի օրակարգում ընդգրկելու համար առաջարկված հարցը չի համապատասխանում Օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

11.7.4. Արտահերթ ժողովի գումարման կամ դրա գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը ուղարկվում է պահանջը ներկայացրած անձանց՝ որոշման ընդունման պահից եռօրյա ժամկետում:

Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

11.7.5. Եթե 11.7.3 կետով սահմանված ժամկետում խորհուրդը արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում, կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:

Նշված դեպքերում արտահերթ ժողովը կարող է որոշում ընդունել փոխհատուցելու ժողովի գումարման հետ կապված ծախսերը՝ Ընկերության միջոցների հաշվին:

11.8. Ժողովի քվորումը

11.8.1. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել է Ընկերության բաժնետերը կամ նրա կողմից լիազորված անձինք, որոնք համատեղ լիազորված են կառավարելու Ընկերության տեղաբաշխված քվեարկվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Եթե Ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է Ժողովի մասնակիցների գրանցում:

11.9. Քվեարկությունը Ժողովում

Քվեարկությունը Ժողովում իրականացվում է բաժնետիրոջ կողմից միանձնյա կամ նրա լիազորված անձանց կողմից՝ «ընկերությանը մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

12.Ժողովի արձանագրությունը

Ժողովի արձանագրությունը կազմվում է Ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակից, Օրենքի հդ. 82-ով սահմանված կարգով և պայմաններով:

13. Խորհուրդը

13.1. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ օրենքներով վերապահված են Ժողովի կամ գործադիր մարմնի իրավասությանը:

13.2. Ժողովի որոշմամբ խորհրդի անդամների համար կարող է սահմանվել պարգևավճար և/կամ փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Պարգևավճարի և/կամ փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանվում են Ժողովի որոշմամբ:

13.3. Ընկերությունը վարում է խորհրդի անդամների ռեեստր, որը խորհրդի անդամների մասին պարունակում է հետևյալ տվյալները՝

ա) անունը և ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

բ) աշխատանքի և/ կամ բնակության վայրն ու հեռախոսահամարը.

գ) զբաղմունքը, մասնագիտությունը և կրթությունը.

դ) խորհրդի կազմում ընտրվելու տարին, ամիսը, ամսաթիվը և խորհրդի անդամությունից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը (եթե դա տեղի է ունեցել).

ե) քանի անգամ է վերընտրվել խորհրդի կազմում.

զ) տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որտեղ տվյալ անձինք զբաղեցնում են ղեկավար պաշտոններ (խորհրդի նախագահ կամ անդամ, տնօրեն, գլխավոր տնօրեն կամ վարչության, տնօրինության անդամ և այլն).

է) Կանոնադրությամբ կամ խորհրդի կանոնակարգով նախատեսված այլ տվյալներ:

13.4. Խորհրդի իրավասությունները

13.4.1. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ կանոնադրության 11.7.5 կետով նախատեսված դեպքերի.

գ) ժողովի օրակարգի հաստատումը.

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը.

ե) Կանոնադրության 11.2.1 կետի «բ», «ժգ», , «ժե», «ժզ», «ժէ», «ժը» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովի քննարկմանը.

զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

է) գույքի շուկայական արժեքի որոշումը Օրենքի 59 հ-ով սահմանված կարգով.

ը) Օրենքով նախատեսված դեպքերում ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

թ) Ընկերության գլխավոր տնօրենի, խորհրդի անդամների, վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը:

ժբ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժգ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժդ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժե)դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը.

ժզ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.

ժէ) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը, դրանց կանոնադրությունների հաստատումը.

ժը) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ժթ) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.

ի) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

իա) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իբ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իգ) Օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

իդ) Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

13.4.2.Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

13.5. Խորհրդի ընտրությունները

13.5.1. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ Ժողովի կողմից՝ Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

Խորհրդի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով:

Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

13.5.2. Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 անդամից պակաս լինել

Խորհրդի անդամների նկատմամբ կանոնադրությամբ կամ Ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգով կարող են նախատեսվել նաև այլ սահմանափակումներ և պահանջներ:

13.6. Խորհրդի նախագահը

13.6.1. Խորհրդի նախագահին ընտրում է խորհուրդը՝ խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր ձայների մեծամասնությամբ:

Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

Խորհրդի նախագահի լիազորությունները դադարում են նոր նախագահ ընտրվելու պահից:

13.6.2. Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

բ) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

13.6.3. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

13.7. Խորհրդի նիստերը

13.7.1. Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով:

13.7.2. Խորհրդի նիստերի քվորումը սահմանվում է խորհրդի անդամների 2/3-ը: Եթե խորհրդի անդամների թիվը նվազում է ընդհանուր թվի 2/3-ից, ապա Ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ Ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է խորհուրդը: Այդ, ինչպես նաև Ժողովի գումարմամբ պայմանավորված այլ որոշումներից բացի, խորհուրդն այլ որոշումներ ընդունելու իրավունք չունի:

13.7.3. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում: Խորհրդի նախագահը ունի որոշիչ ձայնի իրավունք քվեարկող ձայների հավասարության դեպքում:

13.7.4. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում:

Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) նիստին ներկա անձինք.

գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.

ե) նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

14. Ընկերության միանձնյա գործադիր մարմինը (Գլխավոր տնօրենը)

14.1. Ընկերության Գլխավոր տնօրենը իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը :

14.2. Ընկերության Գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Ժողովի և խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

Ընկերության Գլխավոր տնօրենը կազմակերպում է Ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:

Ընկերության Գլխավոր տնօրենը նշանակվում է Ժողովի (Բաժնետիրոջ) որոշմամբ :

Գլխավոր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով, սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և Ընկերության հետ կնքված պայմանագրով: Ընկերության անունից պայմանագիրը ստորագրում է

Ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություն իրականացնող անձը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարը:

14.3. Ընկերության Գլխավոր տնօրենը՝

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

բ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) օրենքով սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին և Ընկերության աշխատակիցներին.

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

15. Խորհրդի անդամների ու գլխավոր տնօրենի պատասխանատվությունը:

15.1. Խորհրդի անդամները, Ընկերության Գլխավոր տնօրենը իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և կատարեն Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ և ողջամիտ կերպով:

15.2. Խորհրդի անդամները, Ընկերության Գլխավոր տնօրենը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և պայմանագրերով սահմանված կարգով:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի այն անդամներն, որոնք Ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

Խորհրդի անդամի կամ Ընկերության գլխավոր տնօրենի իրաժարականը, պաշտոնից հետ կանչելը կամ ազատելը չի ազատում նրանց՝ Ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

15.3. Անձը ազատվում է սույն հոդվածով սահմանված՝ Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությունը կկրի վնասներ:

16. Ընկերության վերստուգող հանձնաժողովը

16.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ժողովն ընտրում է 3 անձից կազմված Ընկերության վերստուգող հանձնաժողով:

Վերստուգող հանձնաժողովը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը:

Վերստուգող հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է կանոնադրությամբ, ինչպես նաև Ժողովի կողմից հաստատված ներքին փաստաթղթով՝ վերստուգող հանձնաժողովի կանոնակարգով:

16.2. Վերստուգող հանձնաժողովն իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև լիազորված անձանցից յուրաքանչյուրի պահանջով:

Վերստուգող հանձնաժողովն իրավունք ունի պահանջել արտահերթ Ժողովի գումարում:

Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա առանձնացված ստորաբաժանումների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

16.3. Վերստուգող հանձնաժողովի անդամներին ընտրում է ժողովը՝ 3 տարի ժամկետով:

Վերստուգող հանձնաժողովը հաշվետու է ժողովին:

Վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և/կամ ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ:

Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:

16.4. Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է այդ հանձնաժողովի կողմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

17. Ընկերության աուդիտն իրականացնող անձը:

17.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով, համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի, Ընկերությունը ներգրավում է աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի (կազմակերպություն կամ ֆիզիկական անձի), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի (Բաժնետիրոջ) հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

17.2. Ընկերության աուդիտն իրականացնող անձին հաստատում է ժողովը: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը՝ համաձայնեցնելով խորհրդի անդամների հետ:

17.3. Ընկերության աուդիտն իրականացնող անձին ներկայացվող պահանջները սահմանվում են օրենքով, այլ իրավական ակտերով և նրա հետ կնքված պայմանագրով: Աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է խորհուրդը:

18. Ընկերության վերստուգող հանձնաժողովի կամ Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:

18.1. Վերստուգող հանձնաժողովը կամ Ընկերության աուդիտն իրականացնող անձը Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների

արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ, որոնք պետք է պարունակեն՝

ա) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը.

բ) Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը.

գ) Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը.

դ) Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին.

ե) ստուգման առանձնահատկությունների հետ կապված այլ տեղեկատվություններ:

18.2. Վերստուգող հանձնաժողովը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է:

19. Ընկերության փաստաթղթերի պահպանումը և բաժնետերերին տրամադրումը

19.1. Ընկերությունը պարտավոր է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում պահպանել՝

ա) Ընկերության պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը, կանոնադրությունում կատարված լրացումները և փոփոխությունները, կանոնադրությունը նոր խմբագրությամբ, Ընկերության հիմնադրման մասին որոշումը.

բ) Ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Ընկերության գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերը.

գ) Ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած՝ Ընկերության ներքին փաստաթղթերը.

դ) Ընկերության առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները.

ե) Ընկերության տարեկան հաշվետվությունները.

զ) Ընկերության բաժնետոմսերի թողարկման ազդագրերը.

է) հաշվապահական հաշվառման փաստաթղթերը (հաշվապահական հաշվեկշիռները, շահույթի և վնասների հաշիվները, աուդիտորական եզրակացությունները և այլն).

ը) պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունները.

թ) ժողովների, խորհրդի, վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, պետական ֆինանսական վերահսկում իրականացնող մարմինների եզրակացությունները.

ժա) Ընկերության հետ փոխկապակցված անձանց ցուցակները.

ժբ) Ընկերության կնքած պայմանագրերը.

ժգ) Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, կանոնադրությամբ, ներքին փաստաթղթերով, ժողովի, խորհրդի և Ընկերության կառավարման այլ մարմինների որոշումներով նախատեսված այլ փաստաթղթերը:

19.2. Ընկերությունը պահպանում է 19.1 կետով նշված փաստաթղթերը՝ իր գտնվելու վայրում:

19.3. Բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը հնգօրյա ժամկետում պարտավոր է նրան տրամադրել 19.1 կետում նշված փաստաթղթերի պատճենները:

20. Ընկերության վերակազմակերպումը

Ընկերության վերակազմակերպումը /միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը/ կատարվում է Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ, օրենքով նախատեսված դեպքերում՝ դատարանի վճռով /բաժանում, առանձնացում/, լիազոր մարմնի թույլտվությամբ /միացում, միաձուլում/:

21. Ընկերության լուծարումը

21.1. Ընկերությունը կարող է լուծարվել.

21.1.1. ժողովի որոշմամբ.

21.1.2. Դատարանի կողմից Ընկերության գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված օրենքի խախտմամբ Ընկերության ստեղծման հետ:

21.1.3. Օրենքով սահմանված այլ հիմքերով:

21.2 Ժողովի որոշմամբ Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումն ընդունվում է բաժնետիրոջ որոշմամբ:

21.3. Ժողովը հաստատում է Ընկերության անփոփիչ հաշվեկշիռը, ընդունում է որոշումներ լուծարման կարգի և ժամկետների, պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգի մասին:

21.4. Ընկերության լուծարման դեպքում նրա իրավունքներն ու պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց չեն անցնում

21.5. Ընկերության գործունեությունը դադարում է լուծարումը պետական ռեգիստրում գրանցման պահից:

Կազմված է 29 թերթից

25.05.2012թ.

Գլխավոր տնօրեն՝ Գ.Սարդոսյան

Կազմված է՝ 25.08.2012թ. 2 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
՝ՀԱԷԿ՝ ՓԲԸ բաժնետիրոջ արտահերթ
ընդհանուր ժողովի ՝30՝ օգոստոսի 2012թ
թիվ _____ որոշմամբ

_____

Ա.Խ. Մովսիսյան
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
՝_____՝_____2012թ.

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ___
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 29.07.1996Թ.

գրանցման թիվ 83.120.00035
վկայական 01Ա003136
հարկ վճարողի հաշվառման համար
04401874

23.07.2012թ. գրանցված կանոնադրության
թիվ 001/3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից
՝19՝ 09 2012թ.

Տ/Բ պետ՝.....

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2012

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 2.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2.1. Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեության իրականացմամբ շահույթի ստացումը:

Ընկերությունը ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում իրականացնում է այնպիսի քաղաքականություն, որի դեպքում գերակայությունը տրվում է անվտանգությանը:

[illegible] 8 2 թերթ

Կազմված է՝ 26.06.2015թ. 2 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"ՀԱԷԿ" ՓԲԸ բաժնետիրոջ արտահերթ
ընդհանուր ժողովի "06" հուլիս 2015թ.
թիվ 4 որոշմամբ

Ե.Վ. Զախարյան
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
"06" հուլիս 2015թ.

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 29.07.1996Թ.

գրանցման թիվ 83.120.00035
վկայական 01Ա003136
հարկ վճարողի հաշվառման համար
04401874

23.07.2012թ. գրանցված կանոնադրության
թիվ 002.3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից
"31" հոկտեմբեր 2015թ.
Տ/Բ պետ .....

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2015

"Հայկական ատոմային էլեկտրակայան" ՓԲԸ Կանոնադրության 5.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

5.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 14 670 349 000 /տասնչորս միլիարդ վեցհարյուր յոթանասուն միլիոն երեքհարյուր քառասունինը հազար/ ՀՀ դրամ, որը կազմում է 4000 /չորս հազար/ հատ հասարակ /անվանական/ բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 3 667 587, 25 /երեք միլիոն վեցհարյուր վաթսունյոթ հազար հինգհարյուր ութսունյոթ հազար, 25 լումա /:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նա կողմից և կառավարվում են ՀՀ Կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից:

2.

Կազմված է՝ 26.04.2016թ. 2 թերթից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 4

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"ՀԱԷԿ"ՓԲԸ բաժնետիրոջ արտահերթ
ընդհանուր ժողովի "28" ապրիլի 2016թ.
թիվ 3 որոշմամբ

Լ.Ս. Յոլյան
ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարար
"28" 04 2016թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 29.07.1996Թ.

գրանցման թիվ 83.120.00035
վկայական 01Ա003136
հարկ վճարողի հաշվառման համար
04401874

23.07.2012թ. գրանցված կանոնադրության
թիվ 003-3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

"03" 2016թ

Տ/Բ աշխ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2016

"Հայկական ատոմային էլեկտրակայան" ՓԲԸ Կանոնադրության 5.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

5.2. "Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 14 663 599 100 /տասնչորս միլիարդ վեցհարյուր վաթսուներեք միլիոն հինգհարյուր իննսունինը հազար/ ՀՀ դրամ, որը կազմում է 4000 /չորս հազար/ հատ հասարակ /անվանական/ բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 3 665 899, 77 /երեք միլիոն վեցհարյուր վաթսունհինգ հազար ութհարյուր իննսունինը հազար դրամ, 77 լումա /:"

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ Կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից:

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
Օրինակ----2----

Հաստատված է
<<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի
Բաժնետիրոջ արտահերթ ընդհանուր
ժողովի որոշմամբ
<23>_____12_____2016թ.

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարար
_____Ա. Մանուկյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐՈՒՄ
գրանցման թիվ 83.120.00035
29.07.1996թ.
ՀՍՀՀ 044018 74
վկայական N 01Ա003136
23.07.2012թ. գրանցման համարանիշ
թիվ 114 փոփոխությունը գրանցված է
ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալությունում <16>_02_____2017թ.

գործակալության պետ_____

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2017թ.

Կանոնադրության 5.2 և 14.2 կետերում <<ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների>> բառերը փոխարինել <<ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների>> բառերով:

Սույն փոփոխությունը հանդիսանում է <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի 23.07.2012թ. գրանցված կանոնադրության /գրանցման թիվ 83.120.00035, վկայական թիվ 01Ա003136/ անբաժանելի մասը:

Հաստատված է
«Հայկական ատոմային էլեկտրակայան»
ՓԲԸ բաժնետիրոջ արտահերթ ընդհանուր
ժողովի 13.10.17 թ. N 5 որոշմամբ
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարար

_____ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կազմված է 17.10.2017թ.
Բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
Օրինակ 3

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
Ձեռնարկությունների պետական
Ռեգիստրի կողմից 29.07.1996թ.
Գրանցման թիվ 83.120.00035
Վկայական 01Ա003136
ՀՎՀՀ 04401874
23.07.2012թ. գրանցված
կանոնադրության թիվ 004.3
փոփոխությունը գրանցված է ՀՀ
Արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

«16» «10» 2017թ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2017Թ.

1. Կանոնադրության 11.2.1 կետի «թ» ենթակետում «տնօրենի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև գլխավոր տնօրենի առաջին տեղակալի» բառերը:

2. Կանոնադրության 13.4.1 կետի «թ» ենթակետում «տնօրենի» բառից հետո լրացնել «գլխավոր տնօրենի առաջին տեղակալի» բառերը:

3. Կանոնադրության 14.1 կետում «ղեկավարում է» բառից հետո լրացնել «իսկ նրա առաջին տեղակալի իրավասությունները սահմանվում են նախարարի կողմից նրա հետ կնքված պայմանագրի համաձայն»:

4. Կանոնադրության 14.2 կետի 3-րդ պարբերությունում «նշանակվում է» բառը փոխարինել «գլխավոր տնօրենի առաջին տեղակալը նշանակվում են» բառերով:

5. Կանոնադրության 14.3 կետի «ե» ենթակետում «աշխատանքային» բառից հետո լրացնել «բացառությամբ գլխավոր տնօրենի առաջին տեղակալի» բառերը:

Սույն փոփոխությունները հանդիսանում են «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 23.07.2012թ.-ին գրանցված կանոնադրության անբաժանելի մասը:

Կազմված է՝ 09.11.2018 թ.
2 թերթից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"ՀԱԷԿ"ՓԲԸ բաժնետիրոջ արտահերթ

ընդհանուր ժողովի "15" 11 2018թ.
որոշմամբ

Գ.Բաղրամյան
ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարար

"15" 11 2018թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 29.07.1996թ.

գրանցման թիվ 83.120.00035

վկայական 01Ա003136

հարկ վճարողի հաշվառման համար
04401874

23.07.2012թ. գրանցված կանոնադրության
թիվ 005.3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

"15" 11 2018թ.

Տ/Բ պետ՝.....

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2018

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ Կանոնադրության 11.2.1 կետի «թ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

թ) Գլխավոր տնօրենի նշանակումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ Կանոնադրության 13.4.1 կետի «թ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

թ) Ընկերության գլխավոր տնօրենի, խորհրդի անդամների, վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ Կանոնադրության 14.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ընկերության Գլխավոր տնօրենը իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը»:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ Կանոնադրության 14.2 կետի 3-դ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«Ընկերության Գլխավոր տնօրենը նշանակվում է ժողովի (Բաժնետիրոջ) որոշմամբ»:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ Կանոնադրության 14.3. կետի "ե" ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

ե) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային: Նախապես համաձայնեցնելով Բաժնետիրոջ հետ, նշանակում է իր տեղակալներին:

Կազմված է՝ 13.12 2019թ.

Տպագրված է ընդամենը 3 օրինակ

Բաղկացած է 2 թերթից

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"ՀԱԷԿ"ՓԲԸ բաժնետիրոջ արտահերթ
ընդհանուր ժողովի 13.12.2019թ.
կայացրած որոշմամբ
(արձանագրություն թիվ 2)

Գլխավոր տնօրեն _____

"13" _____ 2019թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 29.07.1996Թ.

գրանցման թիվ 83.120.00035

ՀՎՀՀ 04401874

23.07.2012թ. գրանցված կանոնադրության
թիվ 006.3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

աշխատակից _____

"20" _____ 2019թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2019

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ Կանոնադրության 1.1. կետում «.....ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության» բառերից հետո ավելացնել «--------Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բառերով

5.2. կետում ՝ «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի» բառերը փոխարինել «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի» բառերով:

14.2. կետում «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից» բառերը փոխարինել «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի» բառերով:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 23.07.2012թ. գրանցված կանոնադրության /գրանցման թիվ 83.120.00035, վկայական թիվ 01Ա003136/ անբաժանելի մասը:

Կազմված է՝ 04.08.2020թ.

Բաղկացած է 2 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"ՀԱԷԿ"ՓԲԸ բաժնետիրոջ արտահերթ
ընդհանուր ժողովի /Բաժնետիրոջ/

"07" օգոստոս 2020թ. որոշմամբ

«ՀԱԷԿ ՓԲԸ» Գլխավոր տնօրեն

Մ.Վարդանյան

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 29.07.1996Թ.
գրանցման թիվ 83.120.00035

ՀՎՀՀ 04401874

23.07.2012թ. գրանցված կանոնադրության
թիվ 007.3 փոփոխությունը գրանցված է
Արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կողմից.

Աշխատակից

"07" 08 2020թ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2020

Կանոնադրության 11.2.1 կետի «թ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«թ) «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի, ինչպես նաև գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-Հայկական ատոմային էլեկտրակայանի տնօրենի նշանակումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.».

Կանոնադրության 13.4.1 կետի «թ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«թ) «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի, գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-Հայկական ատոմային էլեկտրակայանի տնօրենի, խորհրդի անդամների, վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.».

Կանոնադրության 14.2 կետի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ընկերության Գլխավոր տնօրենը և գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-Հայկական ատոմային էլեկտրակայանի տնօրենը նշանակվում են ժողովի (Բաժնետիրոջ) որոշմամբ»:

Կանոնադրության 14.3. կետի «ե» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ե) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, բացառությամբ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-Հայկական ատոմային էլեկտրակայանի տնօրենի աշխատանքային պայմանագրի: Գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-Հայկական ատոմային էլեկտրակայանի տնօրենի աշխատանքային պայմանագիրը Ընկերության անունից ստորագրում է Ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություն իրականացնող անձը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 23.07.2012թ. գրանցված կանոնադրության /գրանցման թիվ 83.120.00035, վկայական թիվ 01Ա003136/ անբաժանելի մասը:

Կազմված է՝ 16.08.2021թ.

Բաղկացած է 2 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՀԱԷԿ» ՓԲԸ բաժնետիրոջ արտահերթ
ընդհանուր ժողովի /Բաժնետիրոջ/

"18" 08 2021թ. որոշմամբ

«ՀԱԷԿ ՓԲԸ» Գլխավոր տնօրեն

Է.Մարտիրոսյան

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

ՕՐԻՆԱԿ 4

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 29.07.1996Թ.
գրանցման թիվ 83.120.00035

ՀՎՀՀ 04401874

23.07.2012թ. գրանցված կանոնադրության
թիվ008.3 փոփոխությունը գրանցված է
Արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կողմից

Աշխատակից

"17" 08 2021թ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2021

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ Կանոնադրության 5.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 16,670,739,100 /տասնվեց միլիարդ վեց հարյուր յոթանասուն միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար, հարյուր/ ՀՀ դրամ, որը կազմում է 4000 /չորս հազար/ հատ հասարակ /անվանական/ բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 4,167,684.775 /չորս միլիոն հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր ութսունչորս, 775/1000/ ՀՀ դրամ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ Կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից:

Կազմված է՝ 20.10.2021թ.

Բաղկացած է 2 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՀԱԷԿ» ՓԲԸ բաժնետիրոջ արտահերթ
ընդհանուր ժողովի /Բաժնետիրոջ/

"25" 10 2021թ. որոշմամբ

«ՀԱԷԿ ՓԲԸ» Գլխավոր տնօրեն

Է.Մարտիրոսյան

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

ՕՐԻՆԱԿ 4

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 29.07.1996Թ.
գրանցման թիվ 83.120.00035

ՀՎՀՀ 04401874

23.07.2012թ. գրանցված կանոնադրության
թիվ 009.3 փոփոխությունը գրանցված է
Արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կողմից

Աշխատակից՝

"18" 11 2021թ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2021

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ Կանոնադրության 5.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 16,662,403,730.5 */տասնվեց միլիարդ վեց հարյուր վաթսուներկու միլիոն չորս հարյուր երեք հազար, յոթհարյուր երեսուն 5/100/* ՀՀ դրամ, որը կազմում է 3998 */երեք հազար ինը հարյուր իննսունութ/* հատ հասարակ /անվանական/ բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 4,167,684.775 */չորս միլիոն հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր ութսունչորս, 775/1000/* ՀՀ դրամ: Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ Կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից: